


4853

286

U-17

Phylh

1920



ՄԻՐԶԵ ՄԱՄԵՂ ՍԱՄԵՂՈՎ
Մատուցելի «Պարկ»

9

ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ԲՅԱԻՆԵՐԻ

ՆՊԱՅԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՋՅՏՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ

ՎԵՐԱԲԵՐՍՈՒՄԸ ՅԱՏՎԱԾԷՍ

ՆԵՐԿԱՅ ՊԱՐԱԳԱՆՆԵՐՈՒՄ

Թարգմանեց յանրեկեց
ԱՍԱՏՈՐԻ Մ. ՍԱՐԳՍԵԱՆՑ

Թիֆլիսի բնականի կառավարչութիւն

ԹԻՖԼԻՍ

Տպարան, Կրտս. Հանր. Բաղաճների Միություն

1920

286

U-17

ՄԻՐՁԸ ՄԸՄԵՔ ՍԸՄԵՔՈՎ
Մարտկոցի „Սարկ“

9

ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ԲՀԱԻՆԵՐԻ

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՉԳՏՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ

ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԸ ՅԱՏԿԱՊԷՍ

ՆԵՐԿԱՅ ՊԸՐԱԳԱՆԵՐՈՒՄ

Թարգմանեց ոսերէնից

ԱՍԱՏՈՒՐ Մ. ՍԱՐԳՍԵԱՆՅ

Եռա

Թիֆլիսի բնակների հրատարակչություն

ԹԻՖԼԻՍ

Տպարան, Վրաս. Հանր. Գաղափների Միություն

1920

2010

ՔՆԴՀԱՆՐԱՊԷՍ ԲՇԱՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՉԳՏՈՒՄՆԵՐԸ
ԵՒ ՆՐԱՆՑ ՎԵՐԱՐԵՄՈՒՆՔԸ ՅԱՏԱԿՊԷՍ ՆԵՐՎԱՑ ՊԱՐԵԳԱՆԵՐՈՒՄ:

Յեղափոխութեան զրեթէ սկզբից իւրաքանչիւր ժողովուրդ, ազգութիւն և զանազան կրօնի հետևորդները, անքում էին իրենց վրայից թօթափել մտքերը կաշկանդող շղթաները, ուղղուել ամբողջ զոյութեամբ և զուրս գալ ազատ զարգացման ապարէզ:

Իսկապէս ջանքը անհրաժեշտ է, առանց ջանքի չի կարելի որևէ նպատակի հասնել. յայտնի բան է «առանց ցանելու չի բուսնի, չաղացուած ցորենն ալիւր չի դառնալ»:

Աշխարհի մարդիկ հետևում են զանազան նպատակների, թոյլ և ճնշուած ժողովուրդները, ոյժերն հաւաքում, սկսում են մաքառել, իսկ զօրեղներից շատերը թուլացած կործանւում են: Ոմանք ասպարէզ են գալիս «Հայրենիք, Հայրենիք» ազազակներով, ուրիշները «Ազատութիւն, Ազատութիւն» սկզբունքով, երրորդները՝ զովաբանում են մամուլը, քաղաքակրթութիւնը, չորրորդները՝ գէպի շառիաթն են կոչ անում, կարևորութիւնը չզգալով վերանորոգման և վերակազմութեան ճրգուման:

Իւրաքանչիւր ազգութիւն իւր ծրագիրն է մշակում: Այդ բոլոր ծրագիրները ամեն տարի, ամեն ամիս, կարելի է ասել նոյնիսկ ամեն օր և ամեն ժամ ենթարկւում են փոփոխութեան:

Ինչպէս տարբեր են ամեն մի ազգութեան նպատակները և ծրագիրները, նոյնպէս և տարբեր են այն ուղիները որոնցով ընթանում են:

Օրինակի համար օմանք անքում են իրենց նպատակները պատուաւատել ուրիշի վրայ բռնուցքի և զէնքի աղդեցութեան տակ:

Աւանդ, ինչպիսի աշխարհահայեացք և մտքերի ինչպիսի ալէծփում:

Քաղաքագէտների ծրագիրները հիմնաւորապէս կերպարանափոխուեցին: Փիլիսոփաների հետազօտութիւնները սոփեստութիւն գուրս եկան: Ժամանակակից մարդկային մտքերի զէտական թէօրիւնները սպասուած արդիւնքը չտւին: Գիտնական-

37649-67

57364-44

ների մտքերն ու խօսքերը, որոնք թւում էին կատարելապէս իրականացող, և որոնք իբր թէ պիտի կարողանային լուծել մարդկային ժամանակակից հասունացած կնճիռները, կեանքի հետ դէմ առ դէմ գալով իրենց սննանկութիւնը ապացուցեցին: Մենք վկաներ հանդիսացանք մինչև օրս չտեսնուած յեղաշրջումների, իրենց նորութիւններով ապշեցնող խօսքեր լսելով:

Անսպասելի անցքեր տեղի ունեցան: Մտքեր ու հոգիներ ցնցող դէպքերի մասնակցեցանք: Բազմի նախանձախնդրութիւնից առաջացած համաշխարհային թատերաբէմի վրայ կատարուած իրար հետևող այնպիսի արիւնատոգող, ողբերգական և գոյնզգոյն երևոյթների ակնատես դարձանք, որոնց հետքերն անգամ չի նկատուել վայրենի ցեղերի, նոյնիսկ արիւնարբու զազանների շրջանում:

Ո՛վ գիտէ, ապագայում դեռ ինչեր պիտի կատարուեն, ինչեր են վիճակուած կատարելու և տեսնելու «մարդկութեան զաւակներին», որոնց դէմքերը դաժան են և սրտերը քարից աւելի կարծր:

Մի խօսքով, յեղափոխութեան շրջանում ամեն ինչ ենթակայ է երկպառակութեան և մեծամեծ փոփոխութեան:

Բայց այն, ուր չկայ երկպառակութիւն, որ պահպանել է իւր նախնական պատկերը, — այդ բնախականների նպատակն ու համոզմունքն է:

Մի նպատակից դէպի միւսը, մի յեղափոխութիւնից միւսը, հին ծրագրից նորը եղած ձգտումները, բնախականութիւնը բացատրում է մարդկային տենջանքները դէպի իսկական բարօրութեան:

Այն օրէնքը, որը միայն կարող է մարդկութիւնը առաջնորդել դէպի վերջինը, դա ճշմարտութեան միակ օրէնքն է, որը երկուք չի կարող լինել: Այս օրէնքը այնպէս կատարելագործուած պիտի լինի որ մարդկութիւնը կարողանայ նրան յենուել և հաւատալ, այդ օրէնքը Աստուծուց ուղարկուած Բնա-Ուլլահի հաստատած օրէնքն է:

Այդ դրութեան հաստատութեան համար բնախներն անկասկած ունին բազմաթիւ կրօնական, պատմական և տրամաբանական ապացոյցներ:

Քանի որ մեր միակ նպատակն է բացատրել բնախականների համոզմունքը, ուստի այս կրօնի ճշմարտութեան հաստատութեան համար փաստեր բերելը մեր նպատակից դուրս է: Անշուշտ բնախականների համոզմունքներին մէջ երկպառակութիւն

գոյութիւն չունի, նրանք գտնուում են իրենց նախնական կերպարանքում:

Բնախականների կրօնական համոզումները ոչ միայն չեն հակասում գիտութեան և քաղաքակրթութեան պահանջներին, (բառիս ընդարձակ նշանակութեամբ), այլ նրա հետ կատարելապէս համերաշխ են:

Բնախների նպատակն ու համոզմունքը հետևեալներից է կայացած.

Նախ բնախները, հետևելով իրենց ուուցչի՝ Բնա-Ուլլահի և նրա տեղապահ Աբդուլ-Բնախ խրատներին, պարտաւոր են համայն մարդկութիւնը հրաւիրել մի կրօնական հաւատի, հիմնուած Բնա-Ուլլայից, հիմնական հարցերում ամբողջ մարդկութեան միտքը միացնելու, նրա (Բնա-Ուլլայի) օգնութեամբ մարդկութեան սրտում վերահաստատելու Աստուծային երկիւղը և վերջապէս ամրացնելու հատուցման, հոգու անմահութեան և յաւիտենական կեանքի գոյութեան հաւատքը:

Բնա-Ուլլայի խրատների շրջանը շատ ընդարձակ է, որքան ուշադրութեամբ որ գնուի, չի կարելի հորիզոնը տեսնել, այս պատճառով դեռ չի կարելի մանրամասնաբար նրա լաւ կողմերը քաջատրել: Այս խրատները այնքան ժամանակակից են, որ համայն մարդկութիւնը նրան հետևելով կարող է ազատ և խաղաղ ապրել նրա հովանու տակ: Սրա արժանաւորութիւնը այն է, որ զանազան կրօնի և համոզմունքի հետևորդներին թոյլագրում է իրենց նպատակն ու ձգտումները իրականացնելու միջոցներ գտնել:

Այս վարդապետութիւնը դաւանել ցանկացողները կարող են այդ ըմբռնել առողջ քննադատութեամբ, գիտութեամբ, քաղաքականութեամբ, զգացումով և ճշմարտութեամբ: Այս կրօնը ընդունողի համար քննադատութեան դռները բաց են այդտեղ հիմք, նշանակութիւն և փաստ չունեցող խօսքը տեղ չունի: Ամեն մի խնդիր ապացուցւում է սիրով և բարութեամբ, տգէտին չեն դիմաւորում կշտամբանքով, ծաղրն ու անսրբանքը ոչ ոքի դէմ անթոյլատրելի են:

Այս ընդհանրական կրօնը անցեալ բոլոր վարդապետութիւնները համարում է ճշմարիտ: Ամեն մի վարդապետութիւն սահմանուած ժամանակաշրջանին է տիրապետում: Այդ ժամանակաշրջանը լրանալուց յետոյ, կրօնը վերանորոգւում է Աստուծոյ կամեցողութեամբ մի նոր հիմնադրի միջոցաւ: Ամեն մի կրօն իրեն յատկացուած ժամանակաշրջանի համար կատարեալ

և բաւարար է: Այս վարդապետութիւնը չի գաւանդում որեւէ կրօնի յաւիտենականութիւնը. (Երկնային գրքերում այս առթիւ ոչ մի հիմունք գոյութիւն չունեն). բացի այս, նոյնպէս Սուրբ գրքերում, որոնք բովանդակում են մարգարէների մտքերը, այս հարցը ամենալաւ կերպով հաստատուած են, ամեն մի յետագայ մարգարէ փոփոխել է նախորդ մարգարէի երկրորդական հրամանները, այսինքն՝ կրօնի ծիսակատարութիւնները և ձևականութիւնները և լոկ դրանցով փոփոխել է նրա վարդապետութիւնը:

Երկրորդ. Բնախականները ընդունում են բոլոր կրօնների հիմունքը Աստուածային օրէնսդրութիւն. նոյնիսկ կրակապաշտների և կրապաշտների կրօնի հիմունքը, արաբքուստ թուացած սրանց աննպատակալարմարութիւնն և կեղծութիւնը բնախականութիւնը վերագրում է նրանց անսահման հստակեան, որը դրել է այդ երկու կրօնների վրայ վայրենութեան, դաժանութեան և կոպտութեան կնիքը: Բնախականութիւնը այդ կրօնները նմանեցնում է մաքուր վճիռ աղբիւրների, որոնք պղտորում են աստիճանաբար իրենց ընթացքում և կորցնում են իրենց նախնական մաքրութիւնը, որի պատճառով ոչ ոք չի ցանկանում այդ ջրից խմել:

Յորրորդ. Գոյութիւն ունեցող կրօնների կենտրոնական սրբազն վայրերը. Երուսաղէմ, Մէքքէ, Քերբէլա, Մեչիդ և ուրիշները բնախները պատում են և յարգանքով են վերաբերում. թոյլ չեն տալիս սրանցից որեւէ մէկի մասին անիծել հայոյել. նոյնիսկ անարգ խօսքեր ասել: Ընդհանրապէս բնախականները թոյլ չեն տալիս ոչ ոքի արտասանելու այնպիսի խօսքեր, որ վշտացնէ կամ անարգէ որեւէ մէկին: Բնախականի լեզուն մաքուր պիտի լինի և պիտի «արտասանէ միմիայն սիրոյ խօսքեր» առանց դուրս գալու բարեկրթութեան սահմանից:

Վերոգրեալներից երեւում է, որ ոչ ոքի համար գիտար չէ բնախական շրջանակը մանել, քանի որ բնախականութիւնը ընդունում է բոլոր կրօնները, նրանց համարում է Աստուածային հաստատութիւն: Այս պատճառով բնախականութեան կրօնը մոնէլու համար անհրաժեշտութիւն չկայ որ մարդ իր նախկին կրօնը, կամ որեւէ գիրքը ուրանայ:

Չորրորդ. Բնախական կրօնի հիմնական վարդապետութեան համաձայն բնախականութիւնը չի ենթարկւում նախապաշարման ու սնտիրապաշտութեան, այլ ընդհակառակը բոլոր երեւոյթները համարում է իսկական ճշմարտութիւն, եթէ միայն այդ երե-

ւոյթները հիմնական գիտութեան չեն հակասում: Այն բոլորը որոնք առողջամտութեան և իսկական գիտութեան հետ չեն համաձայնում անկասկած սնտիրապաշտութիւն են, անա այս պատճառով է որ բնախականութիւնը հաւատքի ու գիտութեան փոխադարձ համաձայնութիւնը գուզնթաց է համարում:

Գիտութիւնն ու հաւատքը, կրօնականութիւնն ու քաղաքակրթութիւնը, Աստուծոյ ծառայութիւնն ու գիտական հմտութիւնը, այս վարդապետութեան համաձայն, համերաշխ են և իրարից անբաժանելի: Ուրմն այժմ պարզ կերպով կարելի է երևակայել թէ որպէս գաւանդներ, նոյնպէս և գիտութիւնը կարող են այս ընդհանրական կրօնի հովանու տակ համերաշխ ապրել, որովհետեւ այդ կրօնը այնպիսի դիրք չունի, որ հակասէ առողջամտութեան և գիտութեան:

Բնախական վարդապետութեան համաձայն, ոչ ոքի ներքին համոզմունքները չի կարելի արհամարել: Ամեն մի համոզմունք և սկզբունք, որ չի փաստում աշխարհի մարդկութեան և համաշխարհային խաղաղութեան, թոյլատրելի է:

Ուրմն պարզ է, որ եթէ ամբողջ մարդկութիւնը անհրաժեշտ անաչարտութեամբ և առանց կրքերի գրգռման վերաբերուի դէպի այս կրօնը, նա կարող է այդ ընդունել և իսկական բարօրութեան հասնել:

Հինգերորդ. Բնախական վարդապետութիւնը զանազան գիտութիւնների և արուեստների ուսուցումը պարտաւորեցուիչ և անհրաժեշտ է համարում: Եթէ ծնողները չեն ցանկանում գաւանդներին դպրոց տալ, կրօնի վճռի համաձայն, կառավարութիւնը պարտաւոր է նրանց յանձնել ուսումնարան: Եթէ ծնողները կարողութիւն ունին, նրանք պարտաւոր են վճարելու ուսման վարձը, հակառակ պարագային կառավարչական գանձարանը պարտաւոր է նրանց օգնելու: Այդչիլը անհրաժեշտ է աւելի լաւ և ժամանակակից ոգւով ստանայ իր գիտութիւնը և գաստիարակութիւնը: ԶԳ որ նա արժանաւոր մայր և գաստիարակ պիտի դառնայ, քանի որ երեխայի առաջին դպրոցը — մօր գուանքն է և նա է նրա առաջին գաստիարակը: Պարզ բան է որքան լրիւ, կատարեալ լինի մօր գաստիարակութիւնը, այնքան կը բարւոքուի երեխայի կրթութիւնը:

Մայրը երեխայի գաստիարակութեան հիմնարկոյն է, եթէ հիմունքը ծուռ լինի, դրա վրայ շինուելիք ամեն ինչ խախուտ անհիմն կլինի:

Մանկական գաստիարակութեան վերաբերեալ անհոգու-

Թիւնը բնախական օրէնքով աններեւն մեղք է: Աւելի լաւ է երեխային սպանել, քան թէ թողնել նրան անկիրթ և առանց դաստիարակութեան:

Բնախական վարդապետութեամբ գիտութեան աւանդումը և կրօնը ձեռք ձեռքի տուած պիտի առաջ գնան: Ինչպէս որ իսկական դաստիարակը այնպէս է աւանդում իր դասերը, որ ոչ միայն երեխան սովորի թուրքի պէս, այլ սովորածը մտածելով և քննադատելով միտքն պահէ: Նոյնպէս էլ կրօնի դասերը այնպէս պիտի աւանդուի որ մանուկը ընդունէ կրօնը— Աշխարհի Փրկիչը: Բնախական ուսումնարանները աւարտող աշակերտները պիտի հասկացող, կրօնասէր և դաստիարակուած դառնան: Այս կրօնում քաղաքակրթութիւնը և հաւատքը նմանեցւում է երկու թևերին ինչպէս որ թռչունը չի կարող թռչել մի թևով, այնպէս էլ մարդկութիւնը չի կարող իսկական բարօրութեան հասնել միմիայն գիտութեամբ կամ միմիայն հաւատով: Կրօնը և գիտութիւնը հաւասարապէս կարևոր են, կրօնը առանց ուսման չի կարող ազատ մնալ նախապաշարմունքից և կուրօքէն իրար հետեւելուց, իսկ գիտութիւնը առանց հաւատի հակառակութիւններ, անհամաձայնութիւններ և պատերազմներ կարող է առաջացնել: Գիտութիւնը առանց հաւատքի այնպիսի կրակ կըրորօքէ, որի բոցերը ոչ մի հնարով կարելի չի դառնալ հանգցնել, ներկայիս Եւրոպայի ժամանակակից նիւթապաշտական գիտութեան նման, որը կործանել է ամբողջ աշխարհը: Այս փաստը անկասկած ծառայում է զգուշացնելու և մեր ասածներն ապացուցիչ մի օրինակ:

Հետեւեալ պարզ է, որ գիտութիւնն ու հաւատքը հաւասարաշափ կարևոր են, թէ մէկը, և թէ միւսը պէտք է աւանդել մարդկութեան նրանց կատարելապէս լուսաւորելու համար:

Վեցերորդ. Բնախականութիւնը մարդու և կնոջ իրաւահաւասարութիւնն ընդունում է: Արտաքինը չպէտք է արտօնութիւնների հիմունք կազմէ, ընդհակառակը միայն գիտութիւնը, կատարելութիւնը և առաքինութիւնն է Աստուածահաճոյ արժանաւորութիւնը: Մարդու և կնոջ մէջ որևէ տարբերութիւն չկայ, թէև Արարիչը մարդկային ցեղի գոյութեան պահպանութեան համար ստեղծեց մարդն ու կինը, բայց թէ մէկին և թէ միւսին մարդ անուանեց: Նրանք երկուսն էլ մարդկային միևնոյն հոգի են կրում, իրար կարիք ունին, մէկն առանց միւսի ապրել չեն կարող: Ահա թէ ինչո՞ւ անհրաժեշտ է նրանց համահաւասարութիւնը: Ինչպէս կանայք նոյնպէս և մարդիկ պատասխա-

նատու են կրօնի և պետութեան առաջ: Մեղադրուած տղամարդը թէ կինը ենթակայ են միևնոյն պատժին և, վարձատրութեան պարագային, նրանց մէջ խտրութիւն գոյութիւն չունի:

Յօթներորդ. Ամբողջ մարդկային ազգերը անկախ ցեղական հայրենասիրական առաւելութիւններից, համոզմունքներից և հայացքներից համարուած են եղբայրներ, առաւելութիւնները կըթուրեններից, դաստիարակութիւններից է նկատելի որոնց բացակայութիւնը պէտք է լրացնել, անկիրթներին պէտք է դաստիարակել, անուսներին սովորեցնել, բայց երբեք չպէտք է վշտացնել դրանց և երես թեքել դրանցից:

Ամբողջ մարդկութիւնը եղբայրներ համարելով, Բնախականութիւնը դրանց երկու խմբերի է բաժանում. 1) խելացիներ, նրբամիտներ և արդարասէրներ, և 2) անկիրթներ, բթամիտներ և անիրաւներ, որոնք չեն կարող խանգարել բոլորին էլ եղբայրանալուն: Եթէ հնարաւոր է անհրաժեշտ է անկիրթը դաստիարակել սիրով ու բարութիւնով, հակառակ պարագային նրա համար աղօթելով Աստծուն յանձնել, որովհետև մարդու դատելը Արարչի գործն է ոչ թէ մարդու: Բնախականներին հրամայուած է առանց նկատի առնելու ուրիշի համոզումն ու աշխարհահայեացքը նրան անկեղծաբար սիրել, ոչ ոքի թշնամի չկանչել:

Ութերորդ. Հասարակական իրաւունքի և օգուտի համար այնպէս պէտք է հետևել, ինչպէս սեփական շահերուն: Պէտք է ուրանալ մի քանի աստիճան անձնական շահը և աշխատել ընդհանուրի բարօրութեան համար: Մարդիկ իրենց բնաւորութեամբ, ճշմարտութեան որոնողներ են, սովորեցնում է բնախականութիւնը, ոչ ոք Արարչի և ճշմարտութեան թշնամին չէ և չէ ձգտում այն ճանապարհը փակելու, որը դէպի նրան են ուղղուած: Այս ու այն ցեղական, հայրենասիրական և սրանց նման մարդկային տարաձայնութիւնները, որոնք առաջանում են կոյր հետեւողութիւններից, հետևանք են անհասկացողութեան, տգիտութեան և սխալ ըմբռնումներից: Ահա թէ ի՞նչ պատճառով մարդիկ, հաւատալիքներով իրենց անմեղացնելով և կրօնական վարդապետութեան տարբեր հասկացողութեամբ իրար արին են հոսեցնում, պատերազմներ մղում և իրար յօշոտում են վայրենի գազանների նման: Անհրաժեշտ է այս կոյր հետեւողականութեան մէջ որոնել չարիքը որը նրանց մխել է մոլորութեան մէջ և ստիպել է ճշմարտութիւնը բացատրելուց խուսափելու:

Ամեն մէկը, ով որ ինչ որ լսում է մի ուրիշ անձնաւորութիւնից, բարեկամներից, զինաւորապէս ուսուցիչներից համարում է իսկական ճշմարտութիւն, առանց ապացոյցների պահանջելու: Հեղինակաւոր անձնաւորութիւնների վրայ տածած կոյր հաւատքի տածման շնորհիւ մարդիկ ճշմարտի տեղ են ընդունում բոլոր լսածները, բայց ոչ ստուգածները, և այս պատճառով նրանք կոյր հետեւողականութեամբ են կաշկանդուած:

Եթէ մարդիկ որեւէ ուղղութիւն բռնելու համար կշռուած փաստեր պահանջէին, և զրան արգարադատութեամբ վերաբերուէին, առանց չար նախապաշարման, այդ պարագային համայն մարդկութիւնը միևնոյն կրօնը պիտի գաւանէր, պիտի առողջամիտ և միանման համոզուէր ունենար, քանի որ բոլորն էլ ձգտում են միակ ճշմարտութեան, իսկ այս վերջինը, ինչպէս արդէն յայտնեցինք չի կարող երկուս դառնալ: Մարդիկ կը համենեն ճշմարտութեան և նրանց համոզումները կը միախառնուեն, եթէ նրանք այս ձևով կընթանան ճշմարտութիւնը բացատրելու համար:

Իններորդ. Բնականութիւնը հրամայում է բոլոր հետեւորդներին իրենց բնակուած պետութեան քաղաքական գործերին չմիջամտել և նրանց չհակառակել, հակառակ պարագային նրանց ընթացքը Աստծու ընդգրկմութիւն պիտի համարուի:

Ինչ պետութեան մէջ էլ որ ապրեն բնականները, պարտաւոր են գրա օրէնքներին հպատակուել:

Տասներորդ. Հրամայում է ամբողջ աշխարհը սիրել, այն աշխարհը, որի մէջ բոլորս ծնւել ենք և որն ընդհանրութեան ծննդավայրն է, իսկ մեր հայեցողութեամբ ստեղծած փոքրիկ ծննդավայրերն, որոնց մենք հայրենիք ենք անուանում զրանք կազմում են աշխարհի մի ամբողջ ծննդավայրերի մասնիկներ: Ուստի երկրագունդը բնականների ծննդավայրն է նրա մէջ ապրում են և պարտաւոր են սիրել:

Տասներմիկերորդ. Ամբողջ երկրագնդի վրայ անհրաժեշտ է ձգտել մի կառավարութիւն ստեղծել, մի պարլամենտ, և ամբողջ քաղաքացիների համար միատեսակ իրաւունք*) բնախները պարտաւոր են գերազանց ոյժեր գործ դնել զազաւարական քարոզութիւններով ոչնչացնելու համար այն տարածայնութիւնները որոնք մարդկութեան հիմնական հարցերի լուսաբանու-

*) Այսինքն աշխարհի վրայ գոյութիւն ունեցող բոլոր ազգերի ներկայացուցիչներից կազմել մի կենտրոնական իշխանութիւն:

թեան արգելք են հանդիսանում: Բնականութեան վարդապետութեան ամենաէական խնդիրներից մէկն էլ այս է: Եթէ անհամաձայնութիւնները գոյութիւն չունենան մարդկութեան շրջանում, մարդիկ կապրեն խաղաղ և երջանիկ:

Անհամաձայնութիւններն հետեւեալներն են. 1) կրօնական, 2) Հայրենասիրական, 3) Յեղային, 4) Քաղաքական և իրաւական վիճակի անհամաձայնութիւն, 5) Լեզուի և գրականութեան:

Ամեն տեսակ անիրաւութիւն, հալածանք, արիւնահեղ պատերազմներ, ռարտարապետական համաշխարհային յիշատակարանների կործանումը, պոլիտարիաւի և աշխատաւորի ողորմելի վիճակը, գիտութեան և գեղարուեստի ասպարիզում մարդկութեան յետադիմութիւնը, նոյնիսկ ապագայում գուցէ մարդկային ցեղի ոչնչացումը, այդ բոլորը տարածայնութիւններից են առաջանում: Ահա թէ ուր պիտի նկատել բնական հետեւանքները այդ անհամաձայնութեան:

Բնախների համոզմունքով, քանի որ աշխարհի վրայ այդ անհամաձայնութիւնները գոյութիւն ունին, մարդկութիւնը պիտի լողայ, խեղդուի իր արեան ախիւքների մէջ, այս պատճառով ամենքն էլ պարտաւոր են մի ընդհանուր աշխարհային կրօն գաւանել, որ հիմնուած է Բնա-Ուլլայի հրամանով, միացնել իրենց մտքերը, պէտք է հաստատել և սովորեցնել մի միջազգային լեզու, բացի իրենց լեզուներից, կամ ընտրել գոյութիւն ունեցող լեզուներից մէկը: Այս երկու լեզուներն էլ պէտք է աւանդուեն բոլոր զգրոցներում, որպէսզի երեխաներն չստիպուեն ամբողջ կեանքի կէսը փչացնելու զանազան լեզուներ սովորելու համար:

Եթէ ժամանակի ընթացքում այս իրականանայ, մնացած լեզուները տեղ պիտի տան միջազգային լեզուին: Այդ հիման վրայ մարդկութիւնը չպիտի ստէ «Արեւմուտքում» և «Արևելքում» և իրար հետ ընդհանուր և իրար հետ հատկանայի լեզուով խօսակցելիս պիտի կարողանան տաւաւորութիւնները փոխանակել և պարզել իրար իրենց կարիքները և ոչ ոք չի կարողանալ իր վատ մտադրութիւնները իրականացնել, որոնք առաջ են դալիս ետական զրդումներից: Այլևս մարդիկ թշնամի չեն մնալ կըմբռնեն որ մաղկային կեանքը միշտ և այժմ եղել է միմիայն սրածութիւն արիւնահեղ իրար յօշոտում անմեղը պիտի արդարանայ, մեղաւորը պիտի պատժուի այսպիսով մարդու իրաւունքը կապահովուի:

Ինչպէս արդէն տեսցինք, երկրագունդը մի աշխարհ և մի

հայրենիք է ներկայացնում: Աստուած ստեղծեց մի երկրագունդ, որը նրա կարողութիւնն է, իսկ մենք նրա գերիները, ինչ է պատճառը և ինչ օգուտ ունենք, այդ աշխարհը մասերի բաժանելուց, Լրինակի համար Յրանսիա, Անգլիա, Գերմանիա, Պարսկաստան, Տաճկաստան և այլն: Չէ որ այդպիսի բաժանումն է առաջացրել անհամաձայնութեան գլխաւոր աղբիւրը, պատերազմները, ուր, առանց պատճառի վազում են փառասէրները և արիւն հոսեցնում:

Ինչպէս ցոյց է տալիս պատմութիւնը մարդու զաւակները հէնց սկզբից արիւն են հոսեցրել: Ի՞նչ հետեանք ունեցաւ: Հետեանքն արտայայտուել է այնպէս, որ մի երկիր յաղթել է միւսին, մի փոքր ժամանակ անցնելուց յետոյ, մի նոր կամ նախորդ յաղթուած ժողովուրդը նորից կուելով հեռացրել է իր երկիրը նւաճողին, և այսպէս անվերջ: Վերջ ի վերջոյ յաղթողն ու ընկճուածը մնում են ձեռնունայն «մի ջարդուած դաշտում»: Շատ պարզ է որ արիւնը իզուր տեղն է թափուել:

Այսպէս մինչև օրս մենք անհամաձայնութիւն ենք պահպանել արիւն ենք հոսեցրել, կործանել ենք համաշխարհային ճարտարապետութեան կոթողները և յիշատակարանները, հայրերն ու մայրերը անորդի ենք թողել, նրանց սգի օրերի մէջ ենք թաղել: Թւում է թէ այդպիսի կեանքի հետեանքները բաւական պարզ և համոզեցուցիչ են մեր խօսքերն հաստատելու համար:

Այժմ սիրոյ սկզբունքով եթէ մենք գոնէ ժամանակաւորապէս միանանք, ինչ վնաս կարող ենք ունենալ, առանց արիւն հոսեցնելու եղբայրաբար ապրելուց և այդպիսի մի ցանկալի կեանքի հետեանքը փորձելուց:

Մարդիկ ստեղծուած են և ապրում են ընտելեան ծոցում: Նրանք մի մօր զաւակներ են, հետեալաբար բոլորը եղբայրներ և մի մեծ գերդաստանի անդամներ են հաւասարապէս մէկը միւսի օգնութեան կարօտ: Ահա այս պատճառով համայն աշխարհի բնակիչները պէտք է մի պետութեան քաղաքացի լինին, և միևնոյն իրաւունքները պիտի վայելեն:

Այդ պարագային կանհետանան պատերազմները և արիւնահեղութիւնները, քանի որ մի կառավարութիւն ինքն իրեն հետ չի պատերազմելու և ներքին կարգերը պահպանելու համար շատ քիչ զօրքի կարիք կը զգացուի:

Պարզ է, որ պետութեան ներքին և արտաքին ծախսերը քաղաքացիների վրայ է բարդուած: Պատերազմները ջնջուելուց յետոյ անհետանում է նրա հետ տարէցտարի աճող պատերազ-

մական ծախսերը, քանի որ գնդացիւնների գնդաշահների, թրնգանօթների գործարանները կը վերջանան զօրանօցները, մթերանոցները, զրահակիր և այլ նաւերը կը վերանան, և բանակ գոյութիւն չի ունենայ:

Այս հիմունքով քաղաքացիների ծախսերը անչափ կը փոքրանան, իսկ անդորրութիւնը կը յարատեւէ: Աշխատաւոր պրօլետարիատը քիչ աշխատելով բաւարարութիւն կը ստանայ, քանի որ ներկայ գոյութիւն ունեցող պայմաններում ամենախիստ լարուած ոյժերը պատերազմական կարիքներից են առաջացել:

Մահացու զէնքեր պատրաստող գործարանների փոխարէն, որոնք աշխարհք են կործանում, մարդկութիւնը կը թող և կարիքաւորներին բաւարարող «կրթիչ գործարաններ» պիտի բանալ: Եթէ պատերազմների համար գործադրուած ծախսերի, ջանքերի, ձգտումների մի երրորդ մասը գործադրուէր աշխարհի վերաշինութեան և մարդկութեան դաստիարակութեան համար, այդ ժամանակ, գոյութիւն չէին ունենալ ոչ աղքատներ, ոչ պետութեան կործանիչներ, ոչ աւերակ գիւղեր, ոչ ագէտ, ոչ էլ անկիրթ մարդիկ և վերջապէս չէր գանուել և ոչ էլ մի չար կրքով լարուած սիրտ: Կը գայ ժամանակ, երբ ապագայ մարդիկ ապշած կը դիտեն անցեալ արիւնահեղութիւնների ձգտումները, որոնք արգարացնելու համար «հայրենիք» և «կրօն» են աղաղակել:

Տասնութերորդ. Բնախական վարդապետութեան համաձայն, աշխարհի կառավարութիւնը ստանձնող իշխանութիւնը պէտք է խորհրդակցական հիմունք ունենայ: Այս իշխանութեան կենտրոնը պիտի կոչուի «Արդարագատութեան Գերագոյն Տուն» (Իէյթ-օլ-ադլ-ապամ) այսինքն ընդհանրական պարլամենտ, որի անդամները պիտի ընտրուեն քաղաքային և գիւղական «Արդարագատութեան Տներից»: Համաշխարհային «Արդարագատութեան Տների» գործունէութեան շրջանը հինգ տարով է, հինգ տարին լրանալուց յետոյ ժողովուրդը պարտաւոր է նոր ընտրութիւնների ձեռնարկել:

Կրօնական, քաղաքական և հասարակական խնդիրները, որոնց մասին չէ գրուած Բնաւլայի գրքում, պիտի որոշուեն վերոյիշեալ «Արդարագատութեան Գերագոյն Տանը»:

Ամեն մի անհատի ձայնը, թէ կուզէ նա աշխարհահռչակ գիտնական կամ հասարակ մահկանացու լինի, կուենայ իր վճռական նշանակութիւնը «Արդարագատութեան Տների» հաստատութեամբ:

Հարցերը կը վճռուեն ձայների մեծամասնութեամբ: Արգարադատութեան Տաների վճիռներին չհնազանդողները կը համարուեն Աստծուն անհնազանդներ:

Տասնեւերեքերորդ. Արգարադատութեան Գերագոյն Տան կատարելապէս տրամադրութեան տակ պիտի գտնուին մեծ հարստութիւն: Առայժմ անհնար է թւել թէ ինչից պիտի կազմակերպուի այդ հարստութիւնը: Մենք միայն հասցիներէ ազերւները կարող ենք մասնանշել 1) 19 տոկոս ամեն մի անհատի հիմնական գրամագլխից և նոյնչափ նրա տարեկան հասցիցից*), 2) Անժառանգների գոյքը ամբողջապէս «Տան» տրամադրութեան տակն է գրւում, 3) Տէրերին անյայտ գտնուած առարկաների, գանձերի և չյայտնուած ժառանգորդների մի երրորդ մասը տրւում է «Արգարադատութեան Տան», 4) Օրէնքով արգիւրուած յանցանքների համար սանձանուած տուգանքները, ամեն տեսակ նւէրները և բարեգործական նպատակով եղած զոհարերութիւնները (վախճանները) գրւում են ժողովրդական գանձարանի տրամադրութեան տակ:

Վերելը յիշատակուած ազգային գանձարանի հասցիների աղբիւրներից պիտի գոյանայ մեծ հարստութիւն, որը «Արգարադատութեան Տունը» պիտի գործադրէ համայն մարդկութեան կարիքների և բարօրութեան համար:

«Արգարադատութեան Տան» պարտաւորութեան շարքին է բարձրագոյն, միջնակարգ և տարրական դպրոցների, ընթերցարանների, գրադարանների, թանգարանների, գեղարուեստական դպրոցների, զանազան գործարանների և հիւանդանոցների, ժողովրդական տների և մթերանոցների բանալը (հիմնարկելը) մի խօսքով աշխարհի վրայ չթաղնել ոչ որի աչքաթող, անգրագէտ և անգործ:

Տասնեւերեքերորդ. Բնախականութիւնը արգիւրւած է մուրացկանութիւնը, աշխատանքի ընդունակ անգործները նմանում են անպատու ծառերուն և պարսաւանքի արժանի: Ամեն մի աշխատանքի ընդունակ պարտաւոր է աշխատելու:

Գեղարուեստով և բարեխիղճ վաճառականութեամբ պարսպողները Աստծոյ ծառայողների աստիճանին են հաւասարուած:

*) Մեծնոցների գոյքը Բնա-Ուլլահը եօթը կարգի է բաժանում. 1) Որդիքը ստանում են 18 բաժին, 2) Կիները 6.5 բաժին, 3) Հայրը 5.5 բաժին, 4) Մայրը 4.5 բաժին, 5) Եղբայրները 3.5 բաժին, 6) Գոյրերը 2.5 բաժին և վերջապէս ուսուցիչները 1.5 բաժին: Անժառանգ մեծնոցների գոյքի $\frac{1}{3}$ բաժինը յանձնուած է «Արգարադատութեան Տան»:

Ոչ թէ հարստութեամբ, այլ բարոյական կեանքով և մարդկութեան ծառայելով յարգանքի և պատուի կարելի է արժանանալ:

Տասնեւերեքերորդ. Այնպիսի բացասական յատկութիւնները, օրինակի համար կոպտութիւնը, անիրաւութիւնը, չարութիւնը, բռնութիւնը, դաւաճանութիւնը, բամբասանքը, կնամալութիւնն և մանկամոլութիւնը, պատւի վիրաւորումը, ուրիշի գոյքը յախշտակելը, հայհոյանքը, վայելչութեան և կրթութեան սանձանից դուրս վերաբերմունքը, ինչպէս և ուրիշ կրօնների, նոյնպէս և բնախականութեան կարգերով գատապարտուած և արգիւրուած է:

Բնախականները մերժում են չորս կարգի անձնաւորութիւնների 1) Աֆիօն ծխողներին, 2) Դաւամիտ, 3) Դէպի արգարութիւնը հրաւիրող, իսկ իրենք դրան չկատարողները և 4) Վերջապէս նրանք, որոնք այնպիսի խօսքեր են յատկացնում Բնա-Ուլլային, որ նրան չի պատկանում:

Տասնեւեքերորդ. «Արգարադատութեան Տունը» իր տրամադրութեան տակ գտնուած գրամարկդով կարող է այնպիսի նախապիմ պատրաստել, որ աղքատութիւնը անհետանայ, ամեն անհատ կարողանայ առատութեամբ ապրել: Չէ կարելի որ ոմանք շոյլ ապրեն և ուրիշները քաղցից գոլորշիանան:

Ժողովրդի ամեն դասի իրաւունքն ու անձեռնմխելիութիւնը, արժանաւորութիւնը, վարիչների, գիտնականների, փիլիսոփաների, ուսուցչապետների, հնարագէտների, նորութիւններ ստեղծողների, գեղարուեստի և գիտութեան սպասաւորների յարգանքը, այդ բոլորը պէտք է իստութեամբ պահպանուի և գործադրւի:

Ոչ որի դիրքը չպէտք է ուրացուի կամ փոքրացուի:

Տասնեւեքերորդ. Մարդկանց միութիւնն ու համերաշխութիւնը բնախական օրէնսդրութեամբ պակաս. ծանրալիք խնդիր է ներկայումս: Այս խնդրին Բնա-Ուլլահը մեծ ուշադրութիւն է յատկացրել, չունի որեւէ «Լոն»*) որի մէջ այս խնդիրն չվերաքննուի: Այս միութիւնը ոչ անհատական է, այսինքն չի վերադրուած որեւէ ազգի, կրօնի, ցեղի, այլ համայն մարդկութեան միութիւնն է:

Այստեղ հարցի տեղն է, միթէ կայ որեւէ գէմք, որ ժխտէ միութիւնը, ով է կասկածում որ միութիւնը ու համերաշխութեամբ:

*) Լոն (պատգամ) բառն Բնա-Ուլլայի և Արգուլ-Բնայի յատուկ թելադրուած գրուածքներին են անուանում:

թիւնը գովելի չէ: Յայտնի բան է ոչ ոք, բայց բնախների շըրջանում գոյութիւն ունեցող միութիւնն ու համերաշխութիւնը ուրիշ ազգերի մէջ եղած միութիւնից և համերաշխութիւնից տարբերում է, Նթէ որևէ կրօնի հետևորդի կամ որևէ ազգի մարդիկ դաշնակցում են, անկասկած այդպիսի դաշնակցութիւնը կայացած է որևէ նպատակով: Այդ նպատակին հասնելուց յետոյ կարելի է, շատ անգամ պատահում է այդ դաշնակցութիւնը քայքայւում է, այդ պատճառով կարելի է ասել, որ համանման միութիւններն ու համերաշխութիւնները ժամանակաւոր են.

Միւս կողմից, կարելի է, որ երկու միացած ազգ, կարող են դործել ի վնաս մի ուրիշ ժողովեդի: Այդպիսի միութիւններին առաջանում են բազմապիսի անհամաձայնութիւններ և պատկրազմներ, ինչպէս ներկայ ժամանակակից պատերազմը. կեանքի հիմունքը կործանեց և Ներսիսյան այսպիսի ողբալի կացութեան մէջ դրեց: Այս բոլորը պետութիւնների դաշնակցութիւնների արդիւնքն է:

Այդպէս չէ բնախների հետամտած միութիւնը, նա իրենց կրօնից: մարդկութեան սիրուց է բղխում և որևէ նիւթապատական նպատակ չունի: Կարեքից և մարդկային երկկողմից չէ առաջանում այդ միութիւնը, ոչ էլ բնախականներին մեծացնելու և ուրիշների թուական հաշուից հարստացնելու ձգտումից: Չի կարելի երևակայել մի այնպիսի պարագայ, որ այս միութիւնը որևէ ժողովրդի վնաս պատճառէ.

Բնախները, իրենց կրօնի հրամանի բովանդակութեան համաձայն, պարտաւոր են անխտիր կերպով օգնութեան ձեռք կարկառելու բոլոր այլազան կրօնի հետևող ժողովրդին, որոնք ձգտում են գիտութիւն և կրթութիւն տարածելու, և նպատակ ունենալով բնահանուրի օգտի համար բարեգործութիւն կատարելու, պատերազմների և հակառակութիւնների առաջն առնելու և ամեն մի բարի ձգտումի օգնութիւնը բնախականներին պարտաւորեցուցիչ է:


Որևէ ազգի դէմ թշնամական տրամադրութեամբ կազմակերպուած դաշնակցութեանը բնախականները երբէք չպիտի միանան:

ԳԻՆՆ Է 10 ՌՈՒՐԸ

Am

Ch. 2

4853



ՀՀ Ազգային գրադարան



NL0032038

2013

